ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1953 Общественные науки

Ե. Սարգիսով

ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918—20 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԻՐԵՆՑ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ[1]

Անգլո-ամերիկյան իմպերիալիստների՝ համաշխարհային տիրապետություն ստեղծելու ավազակային ու ագրեսիվ քաղաքականությունը առանձին ցայտունությամբ դրսևորվեց դեռևս առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և, մանավանդ, պատերազմից հետո։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ջախջախիչ հարված հասցրեց անգլո-ամերիկյան իմպերիալիստների ագրեսիվ պլանների իրագործմանը։ Ահա թե ինչու Անգլիան, ԱՄՆ-ը և Ֆրանսիան խաչակրած արշավանք կազմակերպեցին Սովետական Ռուսաստանի դեմ՝ սովետական կարգերը վերացնելու և Ռուսաստանն ու նրա ծայրամասերը իրենց մեջ բաժանելու համար։

Անգլո-ամերիկյան զավթողական պլաններում Անդրկովկասը գրավում էր կարևոր տեղ։ Անդրկովկասը եվրոպական գաղութարարների կողմից դիտվում էր Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված ռազմա-ստրատեգիական կարևոր պլացդարմ, միաժամանակ, կարևոր բաստիոն՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ազդեցության հետագա տարածումը Արևելքում կասեցնելու համար, որտեղ անգլո-ամերիկյան իմպերիալիստները ուզում էին հաստատել իրենց տիրապետությունը։

Անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստները Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի առաջին իսկ օրից որոշեցին՝ ինչ գնով էլ լինի խեղդել սովետական կարգերը Ռուսաստանում և այն իրենց մեջ բաժանել։ Ահա թե ինչ է գրում ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի քարտուղար Լանսինգը պրեզիդենտ Վիլսոնին. «Եթե բոլշևիկները ՝ին կառավարության գլուխ, այդ դեպքում մենք այլևս 'բոլորովին ոչ մի բանի վրա չենք կարող հույս դնել»[2]։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստներն ամեն ջանք թափում էին օգտագործելու ինչպես Սովետական Ռուսաստանի, այնպես էլ Ռուսաստանի ծայրամասերի կոնտրռևոլյուցիոն ուժերը՝ իրենց ագրեսիվ ծրագրերի կենսագործման համար։ Սովետական Ռուսաստանի բաժանման պլանը Անտանտայի պետությունների միջև կազմվել էր դեռևս 1917 թ. դեկտեմբերին։ Այդ պլանի համաձայն Անդրկովկասը և Միջին Ասիան մտնում էին անգլիական զոնայի մեջ։

---

[1] *Զեկուցված է 1953 թ. փետրվարի 27-ին Հայկական ՍՍՌ ԳԱ գիտական սեսիայում, նվիրված Վրաստանում սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձին։*

[2] „Papers Relating to the Foreign Relations of the United States", The Lansing papers, 1914—1920, vol. II, Washington, 1940, p. 344.

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայից անմիջապես հետո, որը նոր դարագլուխ բացեց մարդկության պատմության մեջ, Անդրկովկասի կոնտրռևոլյուցիան՝ հանձինս դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների, կտրեց Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը Սովետական Ռուսաստանից և դրանով հեշտացրեց սկզբում գերմանո-թյուրքական և ապա ամերիկա-անգլիական իմպերիալիստների գաղութային պլանների իրագործումն Անդրկովկասում և այն դարձրեց պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ։ Մինչև 1918 թ. նոյեմբեր ամիսը, ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում և Ադրբեջանում իշխում էին գերմանական և թյուրքական զավթիչները, որոնց փոխարինեցին ամերիկա-անգլիական իմպերիալիստները։

Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերից կազմված բլոկը՝ սեյմը 1918 թ. ապրիլի 22-ին հայտարարել էր Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից, որով և փաստորեն կատարել էր իմպերիալիստական պետությունների կամքն ու թելադրանքը։

Ընկեր Ստալինը ժամանակին կոնկրետ ցուցումներ տալով Անդրկովկասի բոլշևիկներին, իր հայտնի «Դրությունը Կովկասում» և «Կովկասում ստեղծված դրության շուրջը» հոդվածներում մերկացնում է կոնտրռևոլյուցիոն սեյմի և գերմանո-թյուրքական զավթիչների հակասովետական դաշինքը։ «Անդրկովկասի դրությունն ավելի ու ավելի սպառնալից է դառնում,—գրում է ընկեր Ստալինը։—Սեյմի կողմից Անդրկովկասի անկախության հայտարարումը (22 ապրիլի), որը պետք է արձակեր Թիֆլիսի «կառավարության» ձեռքերը, փաստորեն նրան դցեց միջազգային գիշատիչների ծուղակը... Թիֆլիսի մենշևիկների ու նրանց կառավարության անկախությունը *ռուսաստանյան ռևոլյուցիայից անխուսափելիորեն փոխարկվելու է նրանց ստրկական կախման, թյուրք-գերմանական «քաղաքակիրթ» գիշատիչներից։ Այդ կլինի Թիֆլիսի՝ իշխանության գլուխ կանգնած մենշևիկների դաշինքը թյուրք-գերմանական իմպերիալիստների հետ ընդդեմ ռուսաստանյան ռևոլյուցիայի*»[1]։

Անդրկովկասի ժողովուրդներն իրենց բուռն բողոքը հայտնեցին հակասովետական կոալիցիայի այդ քայլի դեմ և էլ ավելի ուժեղացրին իրենց պայքարը իմպերիալիստական գիշատիչ պետությունների վարձկանների դեմ՝ հանուն Սովետական իշխանության հաղթանակի ամբողջ Անդրկովկասում, «... ամբողջ Անդրկովկասի բանվորներս ու գյուղացիներս,—ասված է Շահումյանի «Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին» զեկուցման առթիվ ընդունված բանաձևում,—ոչ մի դեպքում չենք հաշտվում Անդրկովկասը ռևոլյուցիոն Ռուսաստանից անջատելու հետ, և զենքը ձեռքներիս կկռվենք թյուրք-գերմանական բանդաների դեմ և նրանց դաշնակիցների—դավաճաններ Զխենկելիի, Զիաթխանով-Խոյսկիների և նմանների դեմ»[2]։

Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու կապակցությամբ ընկեր Ստալինը գրել է, որ

«Ամբողջ Հայաստանը բողոքում է Թիֆլիսի ինքնակոչ «կառավարու-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 107։

[2] Ս. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 625—628։

թյան» ուզուրպատորության դեմ, պահանջելով սեյմական դեպուտատների հեռացում։ Իսկ մուսուլմանականության կենտրոնը, Բաքուն, Սովետական իշխանության միջնարերդն Անդրկովկասում, իր շուրջը համախմբելով ամբողջ Արևելյան Անդրկովկասը, Լենքորանից ու Կուբայից մինչև Ելիզավետպոլ, զենքը ձեռքին հաստատում է Անդրկովկասի ժողովուրդների իրավունքները, որոնք բոլոր ուժերով աշխատում են պահպանել կապը Սովետական Ռուսաստանի հետ։ ... Անդրկովկասյան բնակչությունը դեմ է Թիֆլիսի «կառավարությանը»։ Անդրկովկասյան բնակչությունը դեմ է Ռուսաստանից անջատվելուն...»[1]։

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները, հակառակ կոնտրռևոլյուցիոն դաշնակների, մենշևիկների, մուսավաթականների դավաճանական քաղաքականությանը, որոնք դեմ էին դիմադրելու գերմանո-թյուրքական զավթիչներին, համառ մարտեր են մղում Անդրկովկաս ներխուժած հորդաների դեմ։ Դաշնակցական ավազակների դավաճանական քաղաքականության հետևանքով թյուրքական հորդաները զավթեցին Հայաստանի մեծ մասը, սրի մատնելով ժողովրդին և թալանելով հայ աշխատավորների ունեցվածքը։

Նույնը կատարվում էր Վրաստանում և Ադրբեջանում։

Այդ նույն ժամանակ անգլիական գիշատիչները, օկուպացնելով Իրանը, իրենց ճանկերն էին մեկնել դեպի Բաքու՝ սովետական կարգերը Բաքվում տապալելու, ամբողջ Ադրբեջանը իրենց տիրապետության տակ գցելու և այն Սովետական Ռուսաստանի դեմ պլացդարմ դարձնելու համար։

Իրանից անգլո-ամերիկյան իմպերիալիստները կապ էին հաստատել իրենց ագենտուրայի՝ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների հետ և ղեկավարում էին նրանց հակասովետական գործունեությունը Բաքվում։

Բաքվի բոլշևիկները [Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումներով Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Վ. Ֆիոլետովի, Կարգանովի գլխավորությամբ հերոսաբար կռվում էին մի կողմից առաջավոր դիրքերում գերմանո-թյուրքական հորդաների դեմ և մյուս կողմից՝ թիկունքում անգլիական ագենտուրայի դեմ, որը օգտվելով Բաքվի Սովետական իշխանության չափազանց ծանր դրությունից, կատաղի ագիտացիա էր մղում Անտանտայի զորքերի կողմից Բաքուն օկուպացնելու օգտին։

Չնայած Բաքվի բոլշևիկների համառ պայքարին, Բաքվի Սովետական իշխանությունը 1918 թ. հուլիսի 31-ին ժամանակավորապես պարտվեց՝ անգլո-ամերիկյան և գերմանո-թյուրքական ու նրանց կոնտրռևոլյուցիոն ագենտուրայի գրոհի հետևանքով։

Բաքվում ստեղծվեց էսեռներից, մենշևիկներից և դաշնակներից կազմված կոնտրռևոլյուցիոն «կառավարություն», որի օժանդակությամբ անգլիական զորքերը Հյուսիսային Իրանից ներխուժեցին Բաքու և օկուպացրին Ադրբեջանը։

Անտանտայի իմպերիալիստները գաղութացնելով Ադրբեջանը, սկսեցին թալանել և քայքայել նրա ժողովրդական տնտեսությունը։ Նրանք Բաքվից դուրս տարան հազարավոր փութ նավթ, բենզին, զավթել էին

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 108—109։

Բաքու—Բաթում նավթամուղը, ամբողջ երկաթուղային և ծովային արանսպորտը։ Անգլիական զավթիչները դուրս տարան Բաքվի բանկի ամբողջ արժեքները։

Արխիվային փաստաթղթերում, Ադրբեջանի աշխատավորների հազարավոր նամակներում և բողոքներում խոսվում է օտարերկրյա զավթիչների և նրանց լակեյներ՝ էսեռների, մենշևիկների, մուսավաթականների և դաշնակների գազանությունների, կեղեքումների, թալանի, սպանությունների մասին։

Անգլիական իմպերիալիստները, չցանկանալով գերմանո-թյուրքական զորքերի հետ մարտի բռնվել, թողեցին Բաքուն և փախան Կրասնովոդսկ։ Անգլիական իմպերիալիստները, էսեռների, մենշևիկների և դաշնակների օգնությամբ, սեպտեմբերի 20-ին Անդրկասպիայի ավազուտներում գազանարար հոշոտեցին Բաքվի հերոսական կոմունայի ղեկավարներին, անձնազոհ կոմունիստներ՝ Ստ. Շահումյանին, Ա. Ջափարիձեին, Մ. Ազիզբեկովին, Վ. Ֆիոլետովին, Կարգանովին և մյուսներին։

Անգլիական իմպերիալիստները և նրանց լակեյներ՝ էսեռները, մենշևիկները, դաշնակները սպանելով Բաքվի բոլշևիկների ղեկավարներին, հույս ունեին վերջ տալ Ադրբեջանի աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն պայքարին։ «Սպանելով առաջնորդներին, կոնտռևոլյուցիան չկարողացավ սպանել պրոլետարիատին, որը հենց երկրորդ օրը վերսկսեց իր մեծ պայքարը...»[1] գրել է Ս. Օրջոնիկիձեն։

Մի կողմից Անդրկովկասում օրավուր աճող ռևոլյուցիոն պայքարի, մյուս կողմից գերմանո-թյուրքական կոալիցիայի իմպերիալիստական պատերազմում պարտության հետևանքով, գերմանո-թյուրքական զավթիչները հարկադրված եղան թողնել Անդրկովկասը։

Գերմանո-թյուրքական զավթիչների հեռացումից հետո մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթականների օգնությամբ անգլո-ամերիկյան իմպերիալիզմը իր տիրապետությունն է հաստատում Անդրկովկասում։ 1918 թ. դեկտեմբերի 23-ին անգլիական մի դիվիզիա դեսանտ է իջեցնում Բաթումում, որից հետո անգլիացիները տիրում են ամբողջ Վրաստանին։ Մենշևիկների «կառավարությունը» իր թերթերում անգլիացիներին համարում էր միակ փրկարարներ, որոնց օգնությամբ մենշևիկները հույս ունեին խեղդել մեծ թափ ստացած ռևոլյուցիոն շարժումը և ամրացնել իրենց արյունոտ տիրապետությունը Վրաստանում։

Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Ե. Գեկեչկորին Անդրկովկասի անգլիական կոմիսար Ուարդրոպի հետ ունեցած իր զրույցում հայտարարում է՝ «Վրաստանի կառավարությունը հասկանում է, որ նա պետք է հենվի մի որևէ ամուր պետական մարմնի վրա և այդ թելադրում է մեզ որոշակի կողմնորոշել մեր օրիենտացիան դեպի Անգլիա»[2]։

Դաշնակցական «կառավարությունը» նույնպես, ամբողջ հույսերը կապելով անգլիացիների հետ, իր 1918 թ. դեկտեմբերի արտակարգ նիստում ընդունեց հատուկ որոշում՝ Հայաստանը գցել Անգլիայի տիրապետության տակ։

---

[1] Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи, 1945, стр. 83.

[2] „Красный архив", т. 2, 1927, стр. 166—167.

Այսպիսով, մենշևիկները, մուսավաթականները և դաշնակները ամբողջ Անդրկովկասը հանձնեցին անգլիական գիշատիչ իմպերիալիստներին։ Անգլիական զավթիչները դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների աջակցությամբ թալանում էին հայ, վրացի և Ադրբեջանցի աշխատավոր մասսաներին։ Նրանք զավթել էին Բաքու—Բաթում նավթամուղը և փաստորեն տիրացել էին Վրաստանի բոլոր երկաթգծերին։ Թիֆլիսի փոստը, հեռագրատունը, ամենալավ շենքերը վերցրել էին իրենց ձեռքը։

Անդրկովկասի օկուպացիայի ժամանակաշրջանում անգլիական զավթիչները երկրից դուրս են տարել 26 միլիոն փութ մանգան, 30 միլիոն փութ նավթ, մեծ քանակությամբ անտառանյութ, բամբակ, ծխախոտ և բազմաթիվ այլ նյութեր։ Մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների այսպես կոչված կառավարությունները հանդիսանում էին անգլիացիների հլու հպատակները։ Այդ «կառավարությունները» իրենց ներքին քաղաքականությունը ամբողջապես համաձայնեցնում էին անգլիացիների հետ։ «Կովկասը տնքում է անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ»—կարդում ենք „Жизнь национальностей" թերթում[1]։

Անգլիացիները Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում ստեղծել էին ռազմա-ոստիկանական դաժան ռեժիմ՝ ռևոլյուցիոն շարժումները խեղդելու համար։ Անգլիական գաղութարարների լիակատար տիրապետության մասին բուրժուական ժուռնալիստ Լուի Ֆիշերը գրում է. «Անգլիացիները Անդրկովկասում սկսել են տեղավորվել տնավարի։ Նրանք իրենց տիրապետության տակ են վերցրել պետական բանկը, փոստը, հեռագրատունը, նավերը և այլն, և ձեռնամուխ են եղել ոստիկանական և տնտեսական ֆունկցիաների կատարմանը»[2]։ Նույն զավթողական քաղաքականությունն էին վարում նաև ֆրանսիական իմպերիալիստները։

1919 թ. Կարմիր Բանակի առաջխաղացումը դեպի Կովկաս, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ աճող ռևոլյուցիոն շարժումը, Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում սովետական կարգեր ստեղծելու համար ներքին և արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարը, Անգլիայում «ձեռքերդ հեռու Սովետական Ռուսաստանից» լոզունգի տակ ուժեղացած պայքարը և վերջապես, անգլիական օկուպացիոն զորքերի մեջ ուժեղացող խմորումները՝ անգլիական կառավարությանը ստիպեցին իր օկուպացիոն զորքերը դուրս հանել Անդրկովկասից։ Լլոյդ Ջորջը դեռ 1919 թ. հունվարի 12-ին Փարիզի կոնֆերենցիայի դելեգատների նախապատրաստման նիստում, երբ քննարկվում էր «ռուսական հարցը», ստիպված էր հայտարարել, որ Անտանտայի երկրների զինվորները չեն ուզում կռվել Ռուսաստանում։ Լլոյդ Ջորջը երկյուղ արտահայտեց, որ լրացուցիչ անգլիական զորքեր ուղարկելու փորձը նույնպես կվերջանա ապստամբությամբ։

Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն «կառավարությունները» երկրում ռևոլյուցիոն շարժումը խեղդելու և իրենց արյունարբու տիրապետությունը շարունակելու համար դիմում են ամերիկյան գիշատիչ իմպերիալիստներին, որոնք իրենց զավթողական, հակասովետական պլանների մեջ Ան-

---

[1] „Жизнь национальностей", № 17 за 1919 г.

[2] Луи Фишер, Империализм нефти, стр. 24—25.

դերկովկասին հատկացրել էին առանձնահատուկ տեղ։ Փարիզի կոնֆերենցիայի փաստաթղթերը, որոնք կազմված են 12 խոշոր հատորներից[1], ցույց են տալիս, թե ամերիկյան իմպերիալիստները ինչու էին շահագրգռված Անդրկովկասի հարցով, մանավանդ այսպես կոչված, հայկական հարցով, կապված «ռուսական» կամ «թյուրքական» հարցերի հետ, որոնց քննարկմանը հատկացվել են կոնֆերենցիայի բազմաթիվ նիստերը։ Այդ փաստաթղթերը ցույց տվեցին, որ ԱՄՆ-ին հետաքրքրում էր ոչ թե Հայաստանի և հայ ժողովրդի փրկության հարցը, այլ իր գաղութային նպատակները։ Նա, օգտվելով այն փաստից, որ հայերը ցրված են Հայաստանի սահմաններից դուրս, շատ երկրներում, ցանկանում էր հենվել Հայաստանի, այսպես կոչված մանդատի վրա և իր տիրապետության տակ գցել այն բոլոր երկրները, որտեղ բնակվում էին հայեր։ Այդ մասին ամերիկյան գեներալ Ջորջ Մոսլին բացահայտ գրել է. «ԱՄՆ-ը պետք է լիակատար կերպով իշխի այն բոլոր տերիտորիաների վրա, որտեղ հայեր են ապրում, ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Թյուրքիայում»[2]։ Դրանով է բացատրվում այն, որ երբ 10-ի խորհրդի 1919 թ. փետրվարի 26-ի նիստում դաշնակցական Հայաստանի ներկայացուցիչները ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին ներկայացրին իրենց աղերսագիրը՝ Հայաստանն ընդունել ԱՄՆ-ի հովանավորության տակ, Վիլսոնը ժողովին խընդրեց այդ հարցը հետաձգել, քանի որ դա անմիջապես կապված էր Թյուրքիայի պրոբլեմի հետ։ Նա իր ելույթում նշեց, որ վաղորդ հարկավոր էր ուսումնասիրել Հայաստանը, Թյուրքահայաստանը, ամբողջ Անդրկովկասը և սահմանամերձ երկրները։ Վիլսոնի առաջարկով, այդ նպատակով որոշվում է Արևելք ուղարկել 26 հոգուց բաղկացած հատուկ ռազմական միսիա՝ ամերիկյան գեներալ Հարբերտի գլխավորությամբ։ Այդ միսիային տրված ինստրուկցիայում առաջարկվում էր «տեղում ուսումնասիրել Թյուրքահայաստանը, ամբողջ ռուսական Անդրկովկասը և սահմանամերձ երկրները քաղաքական, տնտեսական, ռազմական, աշխարհագրական, վարչական և ամերիկյան շահերից բխող այլ տեսակետներից»[3]։ Այդ ինստրուկցիայից պարզ երևում է, որ ԱՄՆ-ի իմպերիալիստներին հետաքրքրում էր ոչ միայն Հայաստանը, այլ Վրաստանը, Ադրբեջանը և ամբողջ Թյուրքիան ու նրա լծի տակ գտնվող արաբական երկրները։

Ժողովուրդների աչքին թոզ փչելու, և Սովետական իշխանության խաղաղասիրական քաղաքականության ազդեցությունը թուլացնելու նպատակով Վիլսոնը հանդես է գալիս իր տխրահռչակ 14 կետերով։ Վիլսոնի 14 կետերի կոմենտարիաները, գրված Եվրոպայում Վիլսոնի ներկայացուցիչ գնդապետ Հաուզի կողմից՝ 1918 թ. հոկտեմբերի վերջին (որի մասին ժողովուրդները չէին իմանում), բացահայտ կերպով ցույց են տալիս ամերիկյան իմպերիալիստների զավթողական քաղաքականության ահռելի մասշտաբները։ Այդ կոմենտարներում առաջարկվում էր ժամանակավոր կա-

[1] „Papers Relating to the Foreign Relations of the US, the Paris Peace Conference", 1919.

[2] *Տես* Кунина, Провал американских планов завоевания мирового господства в 1917—1920 гг., изд. 1951 г., стр. 89—90.

[3] Foreign Relations of the US. 1919, vol. II, p. 841.

ռավարությունների ճանաչում, օգնություն այդ կառավարություններին։ Կովկասը պետք էր գիտել որպես Թյուրքիայի պրոբլեմի մի մասը։

Միջին Ասիան նույնպես դիտվում էր որպես Ռուսաստանի հետ ոչ մի առնչություն չունեցող երկրամաս[1]։

«Ամերիկյան իմպերիալիստները,— գրում է Լենինը,— ձգտում են համոզել աշխարհին և հասարակական կարծիք ստեղծել այն մասին, որ իբր թե հանդես են գալիս փոքր ժողովուրդների շահերի պաշտպանի դերում, այն պահին, երբ Վիլսոնի «իդեալականացրած» դեմոկրատական ռեսպուբլիկան հանդիսանում է ամենակատաղի իմպերիալիզմը, փոքր ու թույլ ժողովուրդների ամենաանամոթ ճնշողն ու խեղդողը»[2]։

Վիլսոնը ամերիկյան զավթիչների ագրեսիվ պլանները իրականացնելու համար Անդրկովկաս ուղարկեց Հարբերդի միսիան։

Ամերիկյան իմպերիալիզմի այդ պլանը հայտնի էր դեռ նախքան Հարբերդի միսիայի գործունեությունը։

Այդ են վկայում Փարիզի կոնֆերենցիայի 1919 թ. հունվարի 30-ի նիստի արձանագրությունները։ Այդ նիստում լսվեց Թյուրքիայում մանդատային կոմիսիայի ամերիկյան սեկցիայի զեկուցումը, որտեղ բացահայտ կերպով ասված է, որ ԱՄՆ-ը ուզում է առանձին-առանձին մանդատ ստանալ ինչպես Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, նույնպես և Անատոլիայի և Կոստանդինոպոլսի համար[3]։

Զեկուցողները նշել են, քանի որ Ամերիկան «պետք է» վերցնի Հայաստանի մանդատը, և, քանի որ «պարզ է, որ միայն Ամերիկան կարող է վերցնել Կոստանդինոպոլսի մանդատը», ապա անհրաժեշտ է նրան տալ Թյուրքիայի մնացած մասի մանդատը, քանի որ «առանձին պետությունների պրոբլեմները Փոքր Ասիայում խիստ կապված են միմյանց հետ, այդ պատճառով էլ հնարավոր չէ հանձնել մանդատը տարբեր խնամակալների, որոնք անխուսափելիորեն ընդհարման մեջ կմտնեն»[4]։

Այսպիսով ամերիկյան իմպերիալիստները ծրագրել էին զավթել ողջ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներն ու Անդրկովկասը։

Լենինը բացահայտելով իմպերիալիստական պետությունների զավթողական քաղաքականության մանդատային նոր ձևը գրել է. «Եվ երբ խոսում են գաղութների մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հավիշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի չնչին մասի իրավունքների բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությանը շահագործելու համար»[5]։

Ամերիկյան իմպերիալիստների պարագլուխ պրեզիդենտ Վիլսոնը դեռ Հայաստանի մանդատը ԱՄՆ-ի սենատի կողմից չհաստատված շտապում է Հայաստանը գցել Ամերիկայի տիրապետության տակ։ Փարիզում հինգ պետությունների պատվիրակությունների ղեկավարների 1919 թ. հուլիսի 3-ի

---

[1] „Архив полковника Хауза", т. 4, М. 1939, стр. 153.
[2] В. И. Ленин, Соч., т. XXVIII, стр. 169.
[3] Foreign Relations of the US, 1919, vol. XII, p. 839.
[4] Մեջբերումը վերցրել ենք „Вопросы истории" № 3, 1951, էջ 74։
[5] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 30, էջ 186։

նիստում Վիլսոնի պահանջով գնդապետ Հասկելը նշանակվում է Հայաստանի Գերագույն կոմիսար։

Հասկելի իրավասության մեջ, բացի Հայաստանից, մտնում էր նաև Թյուրքիան և ամբողջ Անդրկովկասը։ Փարիզի կոնֆերենցիայի 1919 թ. հուլիսի 5-ի նիստի բանաձևում ասված է, որ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ներկայացուցիչները Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Կոստանդինոպոլսում պետք է ստանան հրահանգ համատեղ գործակցության մասին՝ ամերիկյան գնդապետ Հասկելի հետ և օգնեն նրան։

Այդ բոլորը ասում են այն մասին, որ ամերիկյան գաղութարարներն ուզում էին զավթել Սովետական Ռուսաստանի հարավում գտնված սահմանամերձ բոլոր երկրները և ստեղծել միասնական հակասովետական պլացդարմ՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի։

Մեր ռեսպուբլիկայի Պետական կենտրոնական արխիվում կան բազմաթիվ փաստաթղթեր և նյութեր դաշնակ-մաուզերիստների և նրանց տերերի անգլո-ամերիկյան գաղութարարների կողմից Հայաստանի և հայ աշխատավոր մասսաների կողոպուտի, թալանի, գազանությունների մասին։ Ամերիկյան զավթիչները, հենվելով իրենց դաշնակ լակեյների վրա «օգնության» քողի տակ Հայաստանից դուրս էին հանում երկրի հարստությունը, հայ աշխատավոր մասսաների վերջին ունեցվածքը։ Դրա փոխարեն սովամահ եղած ժողովրդին իբրև «օգնություն» տալիս էին չնչին քանակությամբ փտած, փչացած մթերքներ ու ապրանքներ։

Ամերիկյան կեղեքիչները մեծ աղմուկ էին հանել հայ որբ երեխաների որբանոցների կազմակերպման կապակցությամբ։ Իրականում այս հարցում ևս ԱՄՆ-ի գաղութարարները հետապնդել են իրենց զուտ իմպերիալիստական նպատակները։ Նրանք առողջ երեխաներին որբանոցներից ուղարկում էին ԱՄՆ՝ որպես էժան բանվորական ուժ։ Որբանոցներում սովից և հիվանդություններից մահանում էին տասնյակ հազարավոր երեխաներ։

Դաշնակցական ավազակներն իրենց ամերիկյան տերերի թելադրանքով քամում էին աշխատավոր մասսաների վերջին կաթիլ քրտինքը, իրենց ավանտյուրիստական պլանները իրագործելու համար։ Ամենուրեք գյուղերում պտտվում էին դաշնակ ավազակախմբերը, որոնք թալանում էին գյուղացիներին, անխնա սրի էին մատնում դժգոհներին։ Մարդ սպանելը դաշնակ մաուզերիստների համար զվարճություն և պարծանք էր։ «Անկախ» դաշնակցական Հայաստանում իշխում էր անարխիան, սովը և մահը, «Հայաստանը,—ասում է ընկ. Միկոյանը,—դաշնակների ժամանակ որբերի երկիր էր, արցունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականության երկիր»[2]։

Նույն դրության մեջ էին ընկել Վրաստանը և Ադրբեջանը մենշևիկների և մուսավաթականների ու նրանց տերեր անգլո-ամերիկյան կեղեքիչների կարճատև տիրապետության ժամանակ։ Վրաստանում տնտեսու-

---

[1] „Foreign Relations of the US 1919", vol. VIII, p. 43.

[2] Ա. Ի. Միկոյան, Ճառ Երևանի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների ժողովում, 9 դեկտ. 1937 թ., հր. 1939 թ., էջ 10։

թյան ավերումը հասել էր ծայր աստիճանի. արդյունաբերական ձեռնարկությունները բոլորովին քայքայվել էին։ Բավական է նշել, որ 26 մանգանի գործարաններից գործում էր միայն 3-ը. չտեսնված թափով աճել էր գործազուրկների թիվը. կապիտալիստներն իրենց առավելագույն շահույթը ապահովելու համար փակում էին գործարաններն ու ֆաբրիկաները և զբաղվում առևտրով։ Սպեկուլյացիան անչափ աճել էր։ Անգլո-ամերիկյան վտած ապրանքները ողողել էին նաև Վրաստանի շուկան։ Աշխատավոր մասսաների դրությունը տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետևանքով շատ ծանր էր. բանվորների աշխատավարձը բավականանում էր միայն մի քանի օր, իսկ ամսվա մնացած օրերը զուրկ էին ամեն ինչից։

Ծանր էր նաև աշխատավոր գյուղացիության դրությունը, որի մեծ մասը հողազուրկ էր։ Հողազուրկ գյուղացիները ստիպված էին մշակել կալվածատերերի ու կուլակների հողերը, որի համար նրանք ստանում էին բերքի չափազանց չնչին մասը։ Գյուղացիների վզին էր գրված մենշևիկների «կառավարության» հարկային ամբողջ սիստեմը։ Մենշևիկների տիրապետության օրոք էլ ավելի ուժեղացան կալվածատերերն ու կուլակները, որոնք գյուղում հանդիսանում էին մենշևիկների հենարանը։

Ինչպես Հայաստանը և Վրաստանը, նույնպես և Ադրբեջանը դարձել էր անգլիական իմպերիալիզմի գաղութը։ Անգլիացիները կողոպտեցին Ադրբեջանի ժողովրդի հարստությունը և քայքայման հասցրին ամբողջ տնտեսությունը։ Անգլիական ինտերվենտները իրենց ձեռքը գցեցին Ադրբեջանի տնտեսության բոլոր կարևոր ճյուղերը, ինչպես օրինակ, Բաքվի նավթային արդյունաբերությունը, ծովային և երկաթուղային տրանսպորտը։ Անգլիական օկուպանտները և նրանց լակեյներ մուսավաթականները ամենադաժան կերպով խեղդում էին Ադրբեջանի բանվորների և աշխատավոր գյուղացիների ռևոլյուցիոն պայքարը։ Բանվորների և գյուղացիների դրությունը անգլիացիների տիրապետության օրոք էլ ավելի վատթարացավ։ Ադրբեջանի բեկերն ու խաները անգլիական սվիններ օգնությամբ քամում էին գյուղացիների արյան վերջին կաթիլները։

Այսպես էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի դրությունը դաշնակների, մենշևիկների, մուսավաթականների և նրանց տերեր անգլո-ամերիկյան իմպերիալիստների տիրապետության օրոք՝ 1918—1920 թվականներին։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի առաջին իսկ օրից Անդրկովկասի աշխատավոր մասսաները բոլշևիկների պարտիայի գլխավորությամբ, Լենինի և Ստալինի անմիջական ցուցումներով, համառ պայքար են մղում սովետական կարգեր ստեղծելու համար։ Այդ պայքարը ավելի ուժեղացավ և լայն ծավալ ստացավ 1919 թ. երբ դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները Անդրկովկասը գցեցին անգլո-ամերիկյան իմպերիալիստների տիրապետության տակ։

Խոշոր գործադուլի դիմեցին Երևանի և Ալեքսանդրոպոլի արհեստանոցների բանվորները։ Նույն 1919 թ. գործադուլ հայտարարեցին Ալեքսանդրոպոլի տպագրական բանվորները։ Մեծ գործադուլներ տեղի ունեցան Կարսում, Սարիղամիշում և այլ տեղերում։ Բոլշևիկների ղեկավարությամբ Սարիղամիշի բանվորները որոշում են ամերիկյան գնդապետ Հասկելի Սարիղամիշ գալու կապակցությամբ բողոքի ցույց կազմակերպել՝ հակառակ

դաշնակների ցանկության, որոնք պատրաստվում էին նրան դիմավորել հանդիսավոր կերպով։ Բանվորները քանդելով երկաթգիծը, արգելակում են դաշնակների նպատակների իրականացումը։

Գործադուլի են դիմում Անդրկովկասի երկաթուղային բանվորները։ Անդրկովկասի երկաթուղիները գտնվում էին անգլո-ամերիկյան գաղութարարների ձեռքում և հենց այդ պատճառով էլ պատահական չէր, որ երկաթուղայինների գործադուլները ավելի հաճախ էին լինում։ Երկաթուղայինները, բոլշևիկների ղեկավարությամբ, ամեն կերպ աշխատում էին որպեսզի խանգարեն անգլո-ամերիկյան իմպերիալիստներին օգտագործելու այդ երկաթուղիները Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված նպատակների համար։ Երկաթգծի բանվորները խորտակում էին ինտերվենտների զինամթերքներով բեռնված գնացքները՝ կամուրջների և երկաթգծի պայթեցման միջոցով։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի անմիջական ազդեցության տակ Անդրկովկասում ամենուրեք ուժեղ թափով ծավալվում էր աշխատավոր գյուղացիության պայքարը, ինչպես կալվածատիրական հողատիրության դեմ, այնպես էլ օտարերկրյա զավթիչների դեմ։ Հողազուրկ գյուղացիները բռնագրավում էին կալվածատերերի, խանների, բեկերի հողերը, որի ժամանակ տեղի էին ունենում խոշոր ընդհարումներ։ Գյուղացիները հրաժարվում էին հարկ վճարելուց, ստեղծում էին գյուղական սովետներ, կազմակերպում էին ռևոլյուցիոն ջոկատներ։ Դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները իրենց անգլո-ամերիկյան տերերի հետ միասին դիմում էին ամենադաժան մեթոդների՝ գյուղացիական ռևոլյուցիոն շարժումը արյան մեջ խեղդելու համար։

Անգլո-ամերիկյան զավթիչների և նրանց լակեյների սպառնալիքներն ու տեռորը, ոչ թե թուլացնում, այլ, ընդհակառակը, էլ ավելի էին ուժեղացնում Անդրկովկասի բանվորների և աշխատավոր գյուղացիների պայքարը, որի նպատակն էր վերջ տալ անգլո-ամերիկյան իմպերիալիստների և նրանց լակեյների արյունոտ տիրապետությանը Անդրկովկասում և երկրում ստեղծել սովետական կարգեր։

Կարմիր Բանակի տարած հաղթանակները՝ 1919—1920 թվականների ընթացքում, էլ ավելի էին ոգևորում Անդրկովկասի աշխատավոր մասսաներին՝ սովետական կարգեր հաստատելու համար մղված նրանց պայքարում։ Կարմիր Բանակի հաղթական երթը դեպի Կովկաս անսահման ոգևորություն պատճառեց Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին, որոնք ռևոլյուցիոն պայքար էին ծավալել անգլո-ամերիկյան ինտերվենտների և նրանց լակեյներ՝ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների արյունոտ լծի դեմ։

1920 թ. սկզբներին Լենինի և Ստալինի ցուցումներով, Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի գլխավորությամբ հերոսական Կարմիր Բանակը օգնության եկավ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի աշխատավոր մասսաներին։ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի ապստամբ բանվորները ու աշխատավոր գյուղացիները Սովետական Ռուսաստանի փառապանծ 11-րդ Բանակի օգնությամբ Ադրբեջանում ստեղծեցին սովետական կարգեր և դրանով վերջ դրվեց մուսավաթականների և օտարերկրյա իմպերիալիստների արյունոտ տիրապետությանը։

Սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում նոր թափ տվեց Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների ռևոլյուցիոն պայքարին, որը վերածվեց մայիսյան զինված խոշոր ապստամբության։ Հայաստանի մի շարք շրջաններում, ինչպես, օրինակ, Ալեքսանդրոպոլի, Կարսի, Սարիղամիշի, Նոր-Բայազետի, Դիլիջանի, Իջևանի, Զանգեզուրի, Սիսիանի և ուրիշ շրջաններում բռնկվեց մինչև այդ չտեսնված մասսայական ռևոլյուցիոն շարժում՝ մարիոնետային «կառավարության» ու նրա իմպերիալիստական տերերի դեմ[1]։ Չնայած ժամանակավոր պարտության, մայիսյան ապստամբությունը ռևոլյուցիոն մի մեծ դաս էր Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների համար, որոնք մեծ փորձառություն ձեռք բերին սովետական կարգերի վերջնական հաղթանակի համար մղվող պայքարում։

1920 թ. աշնանը հերոսական Կարմիր Բանակը ջախջախեց և դուրս շպրտեց ռուսական սահմաններից անգլո-ամերիկյան գիշատիչների վերջին հենարաններին՝ Պանական Լեհաստանի զորքերին և Վրանգելին։ Դրանից հետո անգլո-ամերիկյան իմպերիալիստները իրենց հույսը դրին քեմալական Թյուրքիայի վրա, աշխատելով Թյուրքիային դուրս բերել Սովետական Ռուսաստանի դեմ։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստներն ամեն ջանք թափում էին, որպեսզի Կովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը դուրս բերեն Սովետական Ռուսաստանի դեմ։ Այդ հարցով զբաղվել են Փարիզի կոնֆերենցիայի մի շարք նիստերում[2], որոնց մասնակցել են նաև Կովկասի կոնտրռևոլյուցիոն «կառավարությունների» ներկայացուցիչները։ Իմպերիալիստական դայլեր Վիլսոնը, Կլեմանսոն, Լլոյդ Ջորջը, Փարիզի «Խաղաղության» կոնֆերանսում փաստորեն հարցաքննում էին իրենց Կովկասի լակեյներին, թե արդյոք նրանք ի վիճակի են Կովկասը «պաշտպանելուց» բոլշևիկներից։ Երկար հարցաքննություններից հետո իմպերիալիստական գայլերը գալիս են այն համոզմունքին, որ Անդրկովկասի «ռեսպուբլիկաները» ի վիճակի չեն կատարելու իրենց տերերի հակասովետական պլանները։ Ահա թե ինչու անգլո-ամերիկյան իմպերիալիստներն իրենց հույսերը կապում են քեմալական Թյուրքիայի հետ, որի դեմ մինչև այդ նրանք պատերազմում էին՝ Թյուրքիան զավթելու համար։ «Հարկավոր է ճանաչել Քեմալին, տալ նրան Հայաստանում կատարած ծախսերի փոխհատուցումը և նա կհամաձայնվի կարմիրներին դուրս վռնդել Բաքվից»[3]։

Քեմալական Թյուրքիան անգլո-ամերիկյան իմպերիալիստների վերջին հույսն էր։ Ընկեր Ստալինը ժամանակին բացահայտեց և գիմակազերծ արեց անգլո-ամերիկյան և Թյուրքական իմպերիալիստների խարդախ գիվանագիտության պլանները։ «Անտանտան,— գրում է ընկեր Ստալինը,— որ հարկադրված հաշտվեց լեհերի հետ հաշտություն կնքելու փաստի հետ, ըստ բոլոր տվյալների, մտադիր չէ զենքը ցած դնելու, նա, ըստ երևույթին, մտադիր է ռազմական գործողությունների ծանրության կենտրոնը փոխադրել հարավ, Անդրկովկասի շրջանը...»[4]։ Անգլո-ամերիկյան իմպե-

[1] ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիր» № 10, 1949, էջ 21։
[2] Տես „Foreign Relations of the US, 1919", vol. IX, pp. 836—838, 892, 894, 904, 958.
[3] Daily Herald, 13 XI/1920.
[4] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 6, էջ 420։

ռիալիստները, հաշվի առնելով քեմալականների ագրեսիվ, զավթողական պան-թյուրքական պլանները, որոշեցին Թյուրքիայի և դաշնակցականների միջև պատերազմ հրահրել։ 1920 թ. աշնանը սկսվեց պատերազմ դաշնակցական Հայաստանի և Քեմալական Թյուրքիայի միջև։ Այդ պատերազմը վերջացավ դաշնակ ավանտյուրիստների լիակատար պարտությամբ։ Թյուրք-ենիչերիները գրավեցին Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրոպոլը։

Քեմալական հորդաները գրավելով Հայաստանի մեծ մասը, պատրաստվում էին հարձակվել Երևանի վրա։ Հայ ժողովուրդը կանգնած էր իր կործանման եզրին։ Թյուրք-ենիչերիները Հայաստանի զավթած տերիտորիայում սրի էին մատնում բնակչությանը, ավերում էին ամեն ինչ, թալանի մատնելով հայ ժողովրդի վերջին ունեցվածքը։ Միակ պետությունը, որ բազմիցս միջամտել էր հայ աշխատավոր մասսաներին օգնելու, ֆիզիկական բնաջնջումից փրկելու համար, դա Սովետական Ռուսաստանն էր, ռուս մեծ ժողովուրդը, որը միշտ էլ եղել է ինչպես հայ ժողովրդի, նույնպես և Անդրկովկասի մյուս եղբայրական ժողովուրդների փրկարարը։

Հայաստանին և հայ աշխատավոր մասսաներին վերջնական ոչնչացումից փրկեց Սովետական Ռուսաստանը, բոլշևիկների պարտիան՝ Լենինի և Ստալինի անմիջական գլխավորությամբ։ Ընկեր Ստալինը 1920 թ. նոյեմբերի սկզբին գալով Բաքու, մոտիկից ծանոթանում է Հայաստանի ծանր դրության հետ և Անդրկովկասի բոլշևիկների առաջ խնդիր է դնում ինչ էլ որ լինի, փրկել Հայաստանը։

Լենինի և Ստալինի անմիջական ցուցումներով Հայաստանի ապըստամբ բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին օգնության են հասնում փառապանծ 11-րդ բանակի զորամասերը՝ ընկերներ Կիրովի, Օրջոնիկիձեի և Միկոյանի գլխավորությամբ և նոյեմբերի 29-ին տապալում են դաշնակ լակեյների և նրանց տերերի՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների արյունոտ տիրապետությունը։ Հայաստանը հայտարարվում է Սովետական Ռեսպուբլիկա։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի կապակցությամբ ընկեր Ստալինը դեկտեմբերի 4-ի «Պրավդա» թերթի համարում տպված իր «Կեցցե Սովետական Հայաստանը» հոդվածում գրում է. «Ճանջված ու բազմաչարչար, Անտանտայի և դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը, —բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց Սովետական երկիր։

Ո՛չ Անգլիայի, հայկական շահերի «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ոչ Վիլսոնի տխրահռչակ տասնևչորս կետերը, ոչ Ազգերի լիգայի մեծադղորդ խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով»—չկարողացան (և չէին կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»[1]։

Դենիկինի և Վրանգելի ուժերի ջախջախումը Կարմիր Բանակի կողմից, սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում և Հայաստանում

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 458։

խոշոր հարված հասցրին անգլո-ամերիկյան հակասովետական ագրեսիվ պլաններին։

Անգլիայի և ԱՄՆ-ի միակ բազան Անդրկովկասում մնում էր մենշևիկյան Վրաստանը։ Վրաստանում էին հավաքվել բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերը։ Թիֆլիսում էին գտնվում Սովետական Ռուսաստանից, Թերեքից, Կուբանից, Դոնից, Ղրիմից, Դաղստանից, Ադրբեջանից և դաշնակցական Հայաստանից փախած կոնտրռևոլյուցիոն ուժերի թափթփուկները։ Վրաստանը,—ասել է Ս. Օրջոնիկիձեն,—հանդիսացել է Անտանտայի գերին. նա ամբողջապես վեր է ածվել կոնտրռևոլյուցիայի բազայի՝ սովետական կարգերը Կովկասում խեղդելու համար։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները որոշեցին մենշևիկների, քեմալական Թյուրքիայի և դաշնակների օգնությամբ առաջին հերթին վերջ տալ սովետական կարգերին Հայաստանում ու Ադրբեջանում, որից հետո հարձակվել Սովետական Ռուսաստանի վրա։ Դա իմպերիալիստական պետությունների կոգմից հակասովետական նոր արշավի նախապատրաստումն էր Անդրկովկասից։

Անդրկովկասի ֆրանսիական գերագույն կոմիսար Շեվալեն Թիֆլիսում 1920 թ. դեկտեմբերի 16-ին բացահայտ կերպով ասաց այդ մասին. «...ամբողջ աշխարհի շահերը պահանջում են տապալել սովետական կարգերը Հայաստանում և Ադրբեջանում»։

Նա միևնույն ժամանակ խոստացավ մենշևիկներին զինված օգնություն ցույց տալ, Վրաստանում ռևոլյուցիոն շարժումը խեղդելու և Սովետական Ռուսաստանի վրա հարձակվելու համար[1]։

Անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստների թելադրանքով, մենշևիկների «կառավարությունը» Սովետական Ռուսաստանից Վրաստանի վրայով Սովետական Հայաստան ուղարկված ապրանքները և մթերքները թույլ չի տալիս Հայաստան տեղափոխել, որպեսզի գրանավ..սավամահ եղած հայ ժողովրդին դուրս հանի Սովետական իշխանության դեմ։ Վլադիմիր Իլյիչ Լենինը այդ կապակցությամբ անձամբ կանչում է իր մոտ մենշևիկների կառավարության ներկայացուցիչ Մախարաձեին և պահանջում է վերջ տալ այդ արգելակմանը։

Անգլո-ամերիկյան ագրեսորները 1920 թ. վերջերին և 1921 թ. սկզբներին Թյուրքիայի գործակալների ակտիվ մասնակցությամբ կազմակերպեցին մի շարք հակասովետական ապստամբություններ Հյուսիսային Կովկասում։

Անդրկովկասի բոլշևիկների սրբազան պարտքն էր ինչ գնով էլ որ լինի, վերջ տալ իմպերիալիստական պետությունների և նրանց վարձկանների գործողություններին՝ Անդրկովկասում։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, Օրջոնիկիձեի և Կիրովի գլխավորությամբ, մերկացնում են իմպերիալիստների նենգ պլանները և համառ պայքար են մղում մենշևիկների արյունոտ տիրապետությանը վերջ տալու, օտարերկրյա ինտերվենտներին ջախջախելու և Անդրկովկասից դուրս շպրտելու։

---

[1] Տես Г. Хачапуридзе, Большевики Грузии в боях за победу советской власти, изд. 1951 г., стр. 302.

Վրաստանի բոլոր ծայրամասերում բանվորները և աշխատավոր գյուղացիները՝ հունվար և փետրվար ամիսներին Վրաստանի բոլշևիկների ղեկավարությամբ համառ մարտեր են մղում մենշևիկների բանդայի և նրանց տերերի՝ անգլո-ամերիկյան զավթիչների դեմ։ 1921 թ. փետրվարի 12-ին տեղի ունեցավ զինված ապստամբություն նաև Լոռում։

Այն ժամանակ, երբ Կովկասյան բյուրոյի և Վրաստանի Կոմպարտիայի ղեկավարությամբ վրացական հերոսական ժողովուրդը, սուս մեծ ժողովրդի և նրա Կարմիր Բանակի օգնությամբ թշնամուն հասցնում էին վերջին հարվածները և շրջապատել էին Թիֆլիսը, անգլո-ամերիկյան և թյուրքական ագրեսորների օգնությամբ Սովետական Հայաստանում դաշնակ ավանտյուրիստները ապստամբություն բարձրացրին և փետրվարի 18-ին գրավեցին Երևանը։ Վրաստանի մենշևիկների կառավարությունը, ինչպես նշել էր „Коммунист Грузии" թերթը, խոստանում է օգնել դաշնակներին։ Փետրվարի 20-ին դաշնակների այսպես կոչված Հայաստանի «իրկությանն» Կոմիտեի նախագահ Վրացյանը դիմում է Վրաստանի մենշևիկների կառավարությանը և օգնություն է խնդրում բոլշևիկների դեմ ընդհանուր ֆրոնտ կազմակերպելու համար, և միաժամանակ խոստանում է Վրաստանի ու Լոռվա ապստամբների թիկունքից հարվածել։

Այդ ժամանակ քեմալական Թյուրքիան, շարունակելով պանթյուրքական-զավթողական քաղաքականությունը, անգլո-ամերիկյան ինտերվենտների հետ միասին ակտիվ գործում էր ամբողջ Կովկասը և Միջին Ասիան գաղութացնելու համար։ Դաշնակների փետրվարյան ավանտյուրիայի ժամանակ քեմալականները նրանց օգնեցին զինված ուժով և զինամթերքով, հույս ունենալով, որ սովետական կարգերը Հայաստանում խեղդելուց հետո հերթը կհասնի Ադրբեջանին և նրանք կտիրանան այդ երկու երկրներին և դրանով իսկ կօգնեն մենշևիկներին խեղդել զինված ապստամբությունը Վրաստանում։ Պատահական չէր, որ մենշևիկների օգնությամբ մարտի 11-ին թյուրքական զորքերը գրավեցին Բաքուն, հույս ունենալով, այդտեղից ընդարձակել իրենց ագրեսիան։ Մինչև անգամ Կարաբեկիր փաշայի լկտիությունը այն աստիճանին հասավ, որ փետրվարի 21-ին ուլտիմատիվ կերպով պահանջեց կատարել Ալեքսանդրոպոլի պայմանագրի բոլոր պահանջները։

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի և նրա բանակի օգնությամբ, ջախջախեցին անգլո-ամերիկյան և թյուրքական զավթիչների ու նրանց վարձկաններ դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների զինված ուժերը և դուրս շպրտեցին Անդրկովկասի սահմաններից։ Փետրվարի 25-ին ծածանվեց կարմիր դրոշը նաև Վրաստանում։

Այսպիսով, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները ընդմիշտ ազատագրվեցին ամերիկա-անգլիական գիշատիչ գաղութարարներից և նրանց ստոր գործակալներ դաշնակների, մենշևիկների, մուսավաթականների արյունոտ տիրապետությունից և բռնեցին կոմունիզմի կառուցման հաղթական ուղին։